39-ՐԴ ՆԻՍՏ

22 Նոյեմբերի 1918թ.

Նախագահում է *Ս. Սահակյան.* մինիստրական օթյակումն են Մինիստր-նախագահ, արտ[աքին] գործոց, ներքին գործոց և զինվորական մինիստրները:

Նախագահը կարդում է օրակարգը.

1. Օրինագիծ նոր գավառների ադմինիստրացիայի կազմակերպման համար վարկ բանալու մասին.
2. Օրինագիծ ամերիկյան գաղթ[ականական] գործերի միսիային մեկ միլիոն ռուբլի փոխարինաբար տալու մասին.
3. Դպրոցական հանձնաժողովի զեկուցումը պետական դպրոցների ռոճիկների մնացորդների մասին.
4. Հարցումներ և հարցապնդումներ.
5. Ընթացիկ հարցեր:

Նախքան օրակարգի մեջ հիշված խնդիրների քննության անցնելը, մանդատային հանձնաժողովի կողմից զեկուցում է տալիս Հ. Սարգսյանը և հայտնում, որ հանձնաժողովը ընդունել է մեծամասնականների հրաժարականը և հաստատում է Ղարաբեկյանի մանդատը:

Ս. Հարությունյան - Աննորմալ է համարում այն երևույթը, որ մեր պետության սահմաններից դուրս գտնված կուսակցական մարմինները տալիս են մանդատներ մեր խորհրդարան եկող պատգամավորներին: Առաջարկում է վերջ տալ այդօրինակ երևույթին և պիտի ամեն մի կուսակցություն Հայաստանում ունենա իր բարձրագույն օրգանը, որը և միայն պիտի լինի մանդատներ տվողը:

Հ. Ազատյան - Բողոքում է այդպիսի առաջարկի դեմ՝ պատճառաբանելով, որ սոց. դեմ[ոկրատիան] միայն հայկական մի կուսակցություն չէ, այլ միջազգային:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է օրակարգի ա. կետի մասին և առաջարկում քննել այն շտապողաբար, որ և անցնում է:

Օրինագծի հիմունքների մասին արտահայտում են թեր ու դեմ մտքեր: Խոսում են *Հ. Ազատյանը, ներքին գործոց մինիստրը, Ս. Մամիկոնյանը, Ա. Խոնդկարյանը:* Օրինագիծը 9 ընթերցումով ընդունում է խորհրդարանը, միայն նախահաշիվը չի քննվում, նկատի ունենալով այն որոշումը, որ արել է խորհրդարանը՝ տալով կառավարությանն իրավունք՝ ծախսելու ընդհանուր նախահաշիվների սահմանում:

Խորհրդարանը միաձայն ընդունում է ֆին. հանձնաժողովի որոշումը ամերիկյան գաղթ[ականական] միսիային մեկ միլիոն ռուբլի փոխարինաբար տալու վերաբերմամբ:

Որոշվեց անհետևանք թողնել պետական դպրոցների ուսուցիչների դիմումն իրենց ռոճիկների մնացորդները տալու մասին պետական միջոցներից, քանի որ խորհրդարանը նման խնդրով դիմող ծխական դպրոցի ուսուցիչների դիմումը նույնպես մերժել է: Միաժամանակ միաձայն որոշվեց խնդիրը հանձնել լուսավորության մինիստրին, որ նա լրացնի թվական տվյալներով և, եթե հնարավոր է, հասարակական և ոչ պետական գումարներով բավարարել ուսուցչության պահանջին:

Տասնհինգ րոպե ընդմիջումից հետո արվում են հարցումներն ու հարցապնդումները, որոնց և կառավարությունը տալիս է իր պատասխանները:

Ս. Վրացյան - Լսելով սոց.-դեմոկրատիական ֆրակցիայի հարցումներն ու հարցապնդումները, մենք գալիս ենք այն եզրակացության, որ նրանք, այսինքն՝ սոց. դեմոկրատները, այստեղ նպատակ են դրել հասարակության մեջ վատ տրամադրություն ստեղծել և վարկաբեկել կառավարությանը: Նկատելի է, առհասարակ, որ քննադատությունն օբյեկտիվ պայմաններից չի բխում, այլ հենց այնպես, տեսականորեն դատելով: Այդ պատճառով էլ անթույլատրելի ենք համարում այն ձևը, որով տարվում է առհասարակ հարցապնդումը:

Նիստը փակվեց գիշ[երվա] ժ. 10-ին:

«Զանգ», 22 նոյեմբերի 1918թ.